մաթիվ հարցեր։ Գիտական զարմանալի հստակությամբ առանձին վիմագիր բեկորների միջոցով Ս. Բարխուդարյանը առաջին անգամ համոզիչ կերպով որոշում է Հերմոնի կրթա-դիտական գպրոցի տեղագրությունը կամ «էջմիածնի ավետարանի» գրչության վայրը, հայտնաբերում է պատմական Ծղուկ գավառի Թանահատի վանքը կամ Բզնեն Նորավանքը, հմտորեն ստուգաբանում և մեկնաբանում է մեքորա, արգան, դէմէքար, կապիճ, մեղումա և այլ տերմիններ։ Բաքվի Քանգարանի բակում ընկած անհայտ տապանաքարի մի քանի կիսեղծ գրերից նա վերստեղծում է Համամ իշխանի տապանագիրը, որը սկզբնաղբյուրի բացառիկ նշանակություն է տալիս հայ-ազվանական առնչությունների ուսումնասիրության համար։

Հայագիտության և հայ արվեստի պատմության մնայուն երկերի շարքում՝ իր ուրույն տեղն ունի Ս. Բարխուդարյանի ծավալուն մենագրությունը միջնադարյան հայ ճարտարապետների, քարգործ-վարպետների մասին, որը հայրենասեր գիտնականի մեծարանքի տուրքն է անցյալի տաղանդավոր շինարարներին։

Սեդրակ Բարխուդարյանը իր վաստակաշատ կյանքի ուղին անցավ մաքուր խղճով և բաց ճակատով, սերունդներին կտակելով գիտական արժեքավոր ժառանգություն։ Անխոնջ գիտնականի սկսած գործերի ավարտումը և հրապարակումը լավագույն հավերժացում կլինի նրա պայծառ հիշատակին։

ՍՈՒՐԵՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՑՈՒՄԸ

Ականավոր գիտնական-հայագետ, Երևանի պետական համալսարանի առաջին ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի հիշատակը հավերժացնելու նպատակով վերջերս ՀՍՍՀ Մինիստրների սովետը ընդունեց հատուկ որոշում, որի մեջ նախատեսվում է·

Հանձնարարել Երևանի քաղաքային սովետին ակադեմիկոս Հ. Մանանդյանի շիրմի վրա կանգնեցնել գիտնականի կիսանդրին և այն շենքի վրա, որ ապրել ու ստեղծագործել է Մանանդյանը (Տերյան, 62) փակցնել հուշատախտակ։

Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությանը և գիտությունների ակադեմիային հանձնարարվում է՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում և ԳԱ պատմության ինստիտուտում սահմանել Հ. Մանանդյանի անվան մեկական ասպիրանտական թոշակ 110-ական ռուբլու չափով։